ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«--------» ---------- 2025թ. **N -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԻ ԳԾՈՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՎՃԱՐՈՒՄ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՇՎԱՐԿՎՈՂ ՏՈԿՈՍՆԵՐԻ՝ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 431-րդ հոդվածով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 49-րդ հոդվածով, ինչպես նաև «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի հ.69-Ա որոշումը, ինչպես նաև՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետի 2025 թվականի հոկտեմբերի 8-ի հ.Ն/59623-25 գրությունը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. «Մալաթիա-Սեբաստիա առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել 2024 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով զուտ շահույթից Երևանի բյուջե վճարման ենթակա 21939.6 հազ.դրամ (քսանմեկ միլիոն ինը հարյուր երեսունինը հազար վեց հարյուր դրամ) շահութաբաժնի գծով պարտավորության մայր գումարի, ինչպես նաև՝ սահմանված ժամկետում վճարում չկատարելու համար հաշվարկվող տոկոսների վճարումից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Տ. ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Մալաթիա-Սեբաստիա ԱԿ» փակ բաժնետիրական ընկերությանը շահութաբաժնի վճարումից ազատելու մասին

Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի մայիսի 20-ի թիվ 344-Ա որոշման և Երևանի քաղաքապետի 2025 թվականի հունիսի 9-ի թիվ 2300-Ա որոշման համաձայն՝ «Մալաթիա-Սեբաստիա ԱԿ» փակ բաժնետիրական ընկերությունը պարտավոր է 2024 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով 54,848.9 հազ. դրամի զուտ շահույթից 2025 թվականին Երևան քաղաքի բյուջե վճարել 21,939.6 հազ. դրամ շահութաբաժին:

Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 255-Ա որոշման համաձայն՝ Երևանի ենթակայության «Մալաթիա-Սեբաստիա» մանկական առողջության կենտրոն փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպվել է միացման ճանապարհով՝ միանալով «Մալաթիա-Սեբաստիա ԱԿ» փակ բաժնետիրական ընկերությանը:

Վերակազմակերպման արդյունքում «Մալաթիա-Սեբաստիա ԱԿ» փակ բաժնետիրական ընկերությունը ստանձնել է Մանկական ԱԿ-ից փոխանցված լրացուցիչ ֆինանսական պարտավորություններ՝ ազատված աշխատակիցների վերջնահաշվարկներ, արձակուրդային նպաստներ և ավելի քան 31,000.0 հազ. դրամ ժամկետանց հարկային պարտավորություններ: Հարկային պարտավորությունները առաջացել են մանկական առողջության կենտրոնում ՀՀ հարկային օրենսգրքի 322 հոդվածի 3-րդ մասի համաձայն կատարված համալիր հարկային ստուգման արդյունքներով 2021 և 2022 թվականների համար շահութահարկի ճշտված հաշվարկների համաձայն առաջացած 31.0 մլն դրամ հարկային պարտավորություններից, որից՝ շահութահարկի գծով՝ 23.8 մլն դրամ և տույժերի գծով՝ 7.2 մլն դրամ: Նշված հարկային պարտավորությունը առաջացել է մանկական առողջության կենտրոնին ՀՀ առողջապահության նախարարության կողմից 2021 և 2022 թվականներին առանց ծախսը հիմնավորող փաստաթղթերի, միայն տեղափոխման բեռնագրով տրամադրված 143.77 մլն դրամ արժողությամբ դեղորայքի, բժշկական նշանակության ապրանքների և պատվաստանյութերի ձեռքբերումից:

Հաշվի առնելով ընկերության զարգացման ընթացիկ փուլի կարևորությունը, ֆինանսատնտեսական ցուցանիշները և ֆինանսական կայունության անհրաժեշտությունը՝ առաջարկվում է «Մալաթիա-Սեբաստիա ԱԿ» փակ բաժնետիրական ընկերությանը ազատել Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի մայիսի 20-ի թիվ 344-Ա որոշմամբ սահմանված 21,939.6 հազ. դրամ շահութաբաժնի և սահմանված ժամկետում վճարում չկատարելու համար հաշվարկված տոկոսների վճարման պարտավորությունից՝ վերոնշյալ պարտավորությունների մարման նպատակով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Տ. ԱՎԻՆՅԱՆ